





ՍՐԲՈՅՆ

ԱԼՓՈՆՍՈՍԻ ԼԻԳՈՒՈՐԵԱՅ

ԵՐԳԻՔ ԸՂՋԱԿԱՆՔ

ՄՐԲՈՅՆ

ԱԼՓՈՆՍՈՍԻ


ԼԻԳՈՒԹՈՐԵԱՅ

ԵՐԳՔ

ԶՂԶԱԿԱՆՔ

ԱՌ ՑԻՍՈՒՄ ԵՒ ԱՌ ՄԱՐԻԱՄ

47285



Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒԻ

1894

Ա.Ռ

ՀՈԳԵԿՑՈՐԴ ԵՂԲԱՅՐ

ԽՆԴՐՈՂ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՍ

Հ. Պ. Մ.

Պղնջետենչ զայս քո իւնդիր՝
Փոխեմ ի ձօն ևս արգապիր.
Ընկալ յօժար որպէս եւ էն՝
Զյօժարակամ յեղեալս յիննեն.
Եւ առ այն Ակր՝ զոյր ցողահոս
Կարէ զտարափս աստ՝ Ալփինսոս,
Ղերձնամբ հեզիկ սըրտիդ ի վեր՝
Հա՛ն զմատուցողս եւ ըզելւէր:
Համայն եւ որք սովաց օգտիր
Զիս աս Ալսուածն իմ յիշեսչիք:

Հ. Պ. Մ—Ա.



ԱՐԲՈՅՆ

ԱԼՓՈՆՍՈՍԻ ԼԻԳՈՒՄՐԵԱՅ

ԵՐԳՔ ԸՂՋԱԿԱՆՔ



Առ Հոգին Առարր

Երթանք յինչն՝ իղձք երկրաւորք, յոյս
անդոյ,

Երթանք որոց ձեզ ակն ունին ըղձակաթ.

Երթանք ի բաց ի հոգւոյս՝ ումշէք պիտոյ.

Աստուած ուրբախց, բարձ յինչն զայս որո-

գայթ:

Բարեաւ գնացէք ով արարածք համը
օրէն.

Թողում յօժար, զի չեմ ձեր, չէք և
գուք իմ:

Միայն Փըրկչին զիս տամ, հրաժեշտ ի
բնաւէն.

Դու ցանկալիդ, ընկալ զոր քեզըս ձօնիմ:

Հստացիր Տէր սիրելի, զանձն իմ ով
ջամբ,

Թագաւորեա յիս անապակ քո սիրով.

Նուաճեա զերբեմն առ ի քէն սիրտս ա-
պլստամբ.

Յիսուս, ընկալ զայս սիրտ, տիրեա լրիւն
իւրով:

Յօդ երկնային, քաղցրածաւալ որ ի շաղ
Զանսուրբ սիրտյն շիջուցանես ըզբորբոք,
Վառեա քոյսովդ, տուր խնդրել զՏէր ան-
ըզբալ.

Յօդեա յոգիս՝ քո չնորհալից կայլակօք:
Հո՛ւր աստուածեան, որ զանձինս քեւ
վառելոց՝

Մաքրեալ գործես պայծառս, վառեա և
ի յիս,

Եւ զանարատ եռանդեանդ արկ յիս ըզ-
բոց:

Հո՛ւր աստուածեան, բորբոքեա զսիրտ և
զողիս:

Ո՛վ սէր անհուն, բազդ երշանիկ՝ որ ըզ-
քեզ

Անդ ի յերկինս տեսեալ լրցցի գեղով քով.
Ո՛չ, Երբ և ինձ քումտարփածուիս ի վա-

յելս՝
Ո՛վ սէր անհուն, Երբ դու տացիս ինձ
լիով:

Հրաւէր Աստուծոյ առ հոգի խուսել ի
միայնուրիւն

Փամիր ի մրլրկաց, և խաղաղական
Մուշյառանձնութես անվլրդով կայան.
Յազմըկեալ ծրփանց աշխարհիդ ի բաց,
Զանփոփոխն հանդիստ աստանօր քեզտաց.
Աստ քեզ ծագեացէ դիմաց իմոց լոյս
Որ իմ սիրելեացն է նուէր մեծայոյս.
Աստ ուսցիս քանի՛ խոտան է աշխարհ,
Փանի՛ քաղցը իցէ սէր՝ առ սիրտ յօժար:

Լըսիցես աստէն ըզձայնս տէրունի,
Հրաւէիրակ սըրտիդ առ սէր կաթոգնի.
Աստ տէսցես՝ որբան հեռացար յինէն,
Ո՞րբան մերժեցէր ըզսէր իմ ի քէն.
Աստէն զապաշնորհ զանձնըդ լացցես,
Եւ սիրտ քո լիցի սիրով բոցակէզ:
Աստ, քեզ ըզսպասեալ նըստիմ յարաժամ:
Զերկնիցն ըզձաշակ ձօնել քաղցրահամ:

Հոգի մոռծեալ ի տուն Աստուծոյ

« Տարաւ ոխո աբժայ ի սէնէակ իւր:
Կարգէաց ի վէրայ իմ պէտ » :

Ուր իցեմ ես . . . զի՞նչ այս սէնէակ
երջանիկ,
Ուր քաղցրութեան ձըդեմ ըզսիւդ ա-
ւասիկ,
Եւ բորբոքեալ վասիմ ի սէր, սէր սաս-
տիկ:
Ո՞ ի փակեալ ու ի ծաղկալից յայս պար-
տէզ,
Ո՞ զիս եմոյծ . ուստի ծաղկանցս այս հան-
գէս.
Ուստի բուրմունքս որ ըզմայլեն զիս այս-
պէս:
Քոն զիս ունի քաղցրիկ, տարերք, ընւռ-
էրուք,
Մի զիս, զիս մի զարթուցանէք՝ տարերք
դուք,
Աստուած իմ, թող նընջել զայս քուն
քաղցրասիւք:

Անբիծ սիրոյն գարեալ զինեւ և զամէն
իղձ երկրաւոր՝ ի բաց տարաւ հան յինէն,
Երջանիկ սիրտ իմ, անկարօտ յօտարէն:

Այլ ես կիզօւմ անհուր, կամիմ ան-
շըլթայս.
Եւ կարեվէր շըրջիմ աննետ խոյստեալս.
Խօսիմ զարդար, մի ոք կացցէ ի յերկբայս:
Բիւր զիս կապանք, բիւր զիս փըքինք
հարկանեն,
Սիրոս էամ բիւր վէր ի սիրոյ սուր ոլա-
քէն,
Այլ չըդիտեմ՝ յիշր ձեռաց վէրքս ելանեն:
Հալիմ ի բոց անոյշ, ի հուր լուծանիմ,
իսկ և իսկ կեամ և իսկ և իսկ մեռանիմ,
Եւ քան զհազար կեանս՝ լաւ գըրեմ զայս
մահս իմ:
Սիրեմ լառութիւն, և ախորժեմ սէր
խօսել.
Մերթ անշարժուն, թեւօք կամիմ մերթ
ճախիրել.
Զամէնեսեան ցանկամ ի նոյն սէր վասել:
Որքան մեկնակ, այնքան գատանիմ ընդ
ընկերս.
Որքան արձակ ի կապանաց իցեմ ես
Այնքան սիրով սըրկիմ հանդոյց ի սէս-
պէս:
Մինչ խոնարհել ձըդնիմ, յաւէտ ամ-
բառնամ.
Թողում, ու անդրէն ունիմ. հեշտից հրա-
ժեշտ տամ,
Եւ հեշտ հըզօր լընու ըդմիրտս յամերամ:
Այրիմ վատնիմ, դարձեալ ինդրէմ
բորբոքիլ.

Մաշիմ՝ և զնոյն ցանկամ, ըզկեալ, զմեւ-
ռանիլ

Ընկայն կամիմ, նա՛ ըլքիտեմ զինչ կամիլ,
Խընդրեմ և ոչ գտանեմ. և զի՞նչ, գի-
տեմ ոչ.

Սիրեմ և ոչ գիտեմ զինչ, սէր ի յազդով
Սակայն ըզգամ զանհուն բարւոյն ի յոդ-
ւոջ:

Ո՛վ վիրաւոր հոգիք, եկայք ուսուցէք
Զի՞նչ խոցահար սըրտից ձերոց գեղ գըտէք,
Երբ ըզիերշն ընկալայք վէր բազցր և հէք:

Ոչ ոք լըսէ. պատասխանէ և ոչ ոք...
Եւ անձկալիդ իմ գու, և գու անողոք՝

Մինչ անձկաբեկ մաղթեմն ի լաց ու ի
բոլոր:

Ե՛կ սէր իմ, եկ, որ զիսն հարեր, և խօ-
սեաց.

Ո՞վես և զի՞նչ կամիս յինէն, Եկ, մերձ կաց,
Յշյց ինձ ըզդէմս քո, և թէ կամիս զայն
մեռայց:

Այլ անձկալիդ իմ, թր'զ, խօսել հըտ-
ման տուր:

Թըւի զամէն գիտես, այլ ոչ սիրոյ հուր.
Զառնես երես զքեզ սիրողին, թողուս
զուր.

Իսկ թէ սիրես և այդքան զիս սիրեցեր,
Հիմ այսգունակ զանձն իմ հարեալ կա-
րեվէր,

Ապա լըքեալ թողուս ի ցաւ կըշալմեեր:

Անկարեկիր գու... այլ մեղայ, զի՞նչ ա-
սեմն.

Ո՛վ անձկալիդ, զի զքեզ սիրեմ լոկ, գի-
տես,

Քեզ միայնոյ հաճյանալ ջանամ ես:
Սէր զիմ ըլքթունս շարժէ, չգիտեմ զոր
խօսիմ,

Եւ սըրտորսակ այն քո փըքին մըտերիմ՝
Յիմարեցոյց սիրով, եբարձ ըզինելս իմ.

Ո՛վ գու սիրոյս կէտ միակ, սէր իմ սըր-
տիս,

Ով գեղանիդ, ով արեգակն, ով բարիս,
Ով Ասուուած, լոյս, կեանք և ամէն զոր
ունիմն:

Զի՞նչ գործեցից, գա՞նձ իմ, ի կամն քո
սըրտին.

Ասա՛ զաշեմ ուսոն զիարդ զէր քոյին
Իմոն սիրովլս լըցուցից կաթոգին:

Գիտեմ զի փոքր է առ ի սէր քո հուրս
այս,

Այլ այսգոյն և մեռանել իսկ է նուազ.
Եւ չէ ինչ շատ թէ մաշեցոյց ես բընաւս:

Եւ արդ, ով սէր, զի ոչ գիտեմ այլ հը-
նար,

Ահա ընկալ զոր քեզ ձօնեմ, սիրով առ,
Զի ողջանդամ քեզ զանձն իմ տամ կա-
մակար:

Սիրտ հարեալ ի գեղն Աստուծոյ

Սիրեացեն այլք զոր կամին .
 ԶԱստուծած միայն ես կամիմ .
 Թէ զքեղ սիրեմ ոչ, կեանքդ իմ ,
 Զո՞ս սիրեցից այլ բնաւին .
 Քո՞ք քեղ նըման գեղեցիկ
 Եւ սիրարժան գըացէ սիրտ :
 Առ գեղ քոյին՝ է հակիրձ
 Եւ սէր հոգւոցն երջանիկ :
 Դուք որ զմոլար կենցաղոյս
 Հարեալ սիրով՝ գանդաչէք,
 Եղեցլիք, ոչ տեսանէք
 Խաղաղութեան չիք ձեղ յոյս :
 Եկայք աղէ, զգեղանին՝
 Եկայք սիրել զսիրով ձեր,
 Երանի՛ եթէ զսէր
 Զօնեալ լիջիք հաճոյ նմին :
 Զըմալ հոգիք տիրասէր,
 Վրկայեցէք դուք բանիս,
 Որբան ըզձեղ և յերկրիս
 Պահէ յանդորըր դութ ձեր :
 Զեղ երանի՛ որք հասեալ
 Ինաւակայս եթերին
 Անդ ասիցէք խընդադին ,
 Հնդդէմ շատոչին լուսափայլ :

« Թէ կեանս ինձ տայր միւսանգամ ,
 ի սէր եւեթ ծախէի » .
 ի նոյն ի սէր նուիրեացի
 Սակայն և այս՝ յորում կեամ :
 Իցն գոհ, Տէրդ իմ անձառ .
 Նա թէ հաճիս՝ զսէրդ յաւել ,
 Զի ինձ անմարթ է սիրել
 Թէ ոչ, Յիսուս, տաս օձառ :
 Այլ դռւ յաւէտ քան զիմ տենչ
 Դու զսու սիրես, քան զոր ես .
 Արդ յայսմ հետէ դու իմ ես ,
 Եւ ես եղէց քո անվերլ :

Հոգի սիրատենէիկ

Հառաչէ սիրտս այս ,
 Եւ չգիտէ ընդէր .
 Զասէ ինձ պատճառս ,
 Եւ հեծէ ի սէր :
 Ասա ինձ, սըրտիկ ,
 Ըզմէ հառաչէս : —
 ԶՅիսուս իմ քալցրիկ ,
 Ասէ, ըզձամ ես :
 Ո՛չ, մընչեաց մընչեաց
 Սիրտ իմ, մի լըռեր ,
 Զի նա զքեղ սիրեաց .
 Լիցին կեանք քո սէր .

Ալնչեաց, և Յիսուս
 Աէրդ իցէ միակ.
 Ալնչեաց, և քո յոյս
 Մարիամ՝ համակ:
 Հառաչեաց անդուշ
 Ըզէեա խոցովիտ,
 Մի երեկ թողուշ
 Ըզյոս քո ոըրտիտ:
 Հառաչանք ոըրտիս,
 Երթայք առ Յիսուս,
 Յոտորն փարելիս
 Փարեցայք ամուրս.
 Ասացէք. թէ զմեզ
 Սերտ քել սիրահար
 Առաքէ յեթերս,
 Զի հաճիս, ո տայր.
 Յամենայն անձնէ
 Սերել ցանկայ զքեզ,
 Եւ զհայցուածո՞ առէ
 Տէր չառնէ անտես:

Քաղցրուրիւն կանացն Աստուծոյ

Զհաճոյս քոյին և ոչ զիմ
 Աստուած, սիրեմ ես ի քեզ,
 Եւ զայն եւեթ ես կամիմ

Զոր բարութեամբ հրամայես:
 Ո՛վ ամբիծ կամք Աստուծոյ,
 Զի՞ արժանի ես սիրոյ:
Կ Դ Հ Ծ
 Կախանձաւոր ես սիրոյն,
 Այլ սիրովի զքեզ անձին.
 Աէր և գըրգանիք ես համբուն,
 Եւ առընթեր միշտ նըմին:
 Ո՛վ ամբիծ կամք Աստուծոյ,
 Զի՞ արժանի ես սիրոյ:
 Դու կեանս ըզմից տաս մաքուր.
 Դու զսէր սըրբեալ կատարես.
 Առ քեզ անձկոտ սըրտին հուր
 Առ քեզ առնէ միշտ վերելս:
 Ո՛վ ամբիծ կամք Աստուծոյ,
 Զի՞ արժանի ես սիրոյ:
 Դու զխաչ գործես փոքրոտի,
 Եւ ըզմահ քաղցր և համբոյր.
 Եւ միացեալ քեզ հոդի
 Ոչ կըրեսցէ կիրս անդոյր:
 Ո՛վ ամբիծ կամք Աստուծոյ,
 Զի՞ արժանի ես սիրոյ:
 Դու միայն դու երջանիկ
 Զհոդիս գործես յեթերին.
 Առանց քո չէր գեղեցիկ
 Մեզ և երկինք անձկալին:
 Ո՛վ ամբիծ կամք Աստուծոյ,
 Զի՞ արժանի ես սիրոյ:
 Եւ ի դըքուս՝ թէ մարթ էր
 Կապեալ ընդ քեզ՝ կալ ի բոց,
 Եւ հուրն և խոցք կարեվէր

Թաղցրանային ի քո ծոց:
 Ո՛վ ամբիծ կամք Աստուծոյ,
 Զի՞ արժանի ես սիրոյ:
 Ո՛չ, վատնեսցին կեանքս ողջցին
 Միացելոյն իմ՝ ընդ քեզ.
 Այլ որ մեռցի զմահ այսգոյն՝
 Նա չեռանի, կեայ և եւս:
 Ո՛վ ամբիծ կամք Աստուծոյ,
 Զի՞ արժանի ես սիրոյ:
 Արդ զիմ՝ ըզկեանս և զամէն
 Ըզսիրս բոլոր՝ քեզ ձնեմ.
 Ինձ սէր լիցի համօրէն
 Սիրա քո, Յիսուս, սիրաձեմ:
 Ո՛վ ամբիծ կամք Աստուծոյ,
 Զի՞ արժանի ես սիրոյ:
 Յանկամ ի վիշտս և ի դիւր
 Հաճոյանալ քեզ լոկոյ.
 Յոր դուն հաճիս մըտադիւր՝
 Լիցի և ինձ այն հաճոյ:
 Ո՛վ ամբիծ կամք Աստուծոյ,
 Զի՞ արժանի ես սիրոյ:



Հոգի աստուծանուեր

Աշխարհ, ոչ եւս իմ ես գու,
 Եւ ոչ ես յայսմ հետէ քոյ.
 Ամէն ըղձիւք զսիրտս ետու
 Զօն Փրկչին քաղցը և հեզոյ.
 Նա ինքն յանձառն իւր բարիս
 Այնպէս ըզսէրն իմ վառեաց,
 Զի յայսմ հետէ չիք սըրտիս
 Տենչ երկրաւոր ինչ բարեաց:
 Ըզքեզ միայն, տէր Յիսուս,
 Ըզքեզ իզնդրեմ զանձկալիք.
 Զանձն իմ բոլոր տամ՝ քեզ տուրս,
 Արա զինչ կամք քո կամիգ:
 Ո՛չ, ըլկարեմ ժոյժ ունել՝
 Առանց քո կեալ, սէր անձառ,
 Քանզի շըզթայդ ոսկեթել
 Կապեաց ըզսիրտ իմ իսպառ:
 Ոչ եւս ի քէն մեկուսի
 Գոյ չնար հոգւոյս կալ հեռուստ.
 Հարեալ ի նետդ Յիսուսի՝
 Եղէ որսիկ անփախուստ.
 Եւ թէպէտ որդն եմ՝ աղկաղկ՝
 Սիրելոյ զքեզ անարժան,
 Այլ դու արժան ես միակ
 Սիրոյ սըրտի անպայման:

Եւ արդ Տէր, տուր ինձ ըզսէր,
Տմւր զոր խընդրեսըդ յինէն.
Եւ ես իմոյն՝ զոր տամ նուեր՝
Ըզսէրդ հայցեմ փոխարէն:
Դու Տէր, գու իմ ամենայն,
Ես քոց կամաց լոկ անսամ.
Յայսմ հետէ իլջք համաձայն
Կամք մեր լիցին համակամ:
Եկ արդ խոցել Տէր իմ Տէր,
Ըզսիրա՞ որ քո է, չէ իմ.
Եւ մեռամել առ քո սէր՝
Արա՛, զի յոյժ փափագիմ:
Կեանքդ և փեսայ՝ զքեղ սիրեմ
Եւ զառաւելըն ցանկամ.
Սիրեմ, ու առ սէրն ըսպասեմ
Թէ երբ հասցէ մահուն ժամ:

Հոգի լրեալ

Այրիք մըթինք մենաւորք,
Որ իմ սըրախս կարեվէր՝
Նըսեմասատուերդ կողերօք
Թըւէք վըշտաց ինձ ընկեր.
Գըթացարմւք յիս, մայրիք,
Թողէք ազատ ինձ երթալ,
Թողէք զնեղեալս իմ սըրտիկ
Հեծել, մընչել լալ ողբալ:

Մի լուսցեն իմ արտասուք,
Մի սըրեւոջիք իմ աչկունք,
Մինչեւ ըլտերն իմ զանձուկ
Գըտից ի ձեզ, ու լուսւթինք:
Իսկ դու՝ ընդ ո՞ր արդեօք գէմ՝
Ո՞վ սիրեցեալդ իմ, գնացեր.
Եւ հիմ ի վիշա բազմագէմ
Հեռա՛ ի քէն զանձն իմ թողեր:
Իցէ գարձեալ թէ տեսից
Զերանաւէտն ամանակ,
Յորում փեսայս անձկալից
Էր մըխթար իմ միակ:
Յորժամ ի նետն իւր համբայր
Խոցեալ ի քուն ըզսիրաս այս,
Իրբեւ ըզգով ապ' առնօյր
Յերկնից աննէր յիւր ի կայս:
Յորժամ ի սէր վառեալ հուր
Հառաչելով երթայի,
Եւ եւս քան զեւս բոց մաքուր
Սըրփար ի սիրաս ամայի:
Ո՛չ, զիարդ օգն հանդարտիկ
Մըրըրկեցաւ յանկարծուսա,
Եւ ինձ երկինքն այն քաղցրեկ
Անլոյս հային ի հեռուստ:
Սըհաւիրք, յով և դառնամ.
Աստ երկիւզ, անդ գէմք սոսկման.
Թէ զհետ փոխեմ բիւր անդամ
Զի՞ն շահ, զի ցաւք ընդ իս կան:
Ամենուրեք միայնակ
Փափառական ես լինիմ,

Յայսքան աղետոս օժանդակ
 Եւ ոչ ըզմի զոք չունիմ։
 Եւ մահ ինքնին փողոտէ
 Զանձն իմ առանց ըստանման։
 Կալէալ զգբունս յայսմ հետէ
 Չըտայ ինձ ելս փախըստեան։
 Եւ թէ փախչիմ, ո՞ր օդուտ։
 Ո՞ւր զիմ գըտից ապաւէն։
 Թէ կենսատուս բարեգութ
 Եւ նա փախչի, ահ, յինէն։
 Ո՛չ, մի, եկ, եկ, անձկալիդ,
 Եկ և գըտցես զոր թողեր։
 Զի լրքեալս այս ի քէն սիրու
 Քեւ կարոտեալ կայ յերեր։
 Այսուհետեւ Եկ, հաշտեաց։
 Դարձիր առ իս, կեանք իմ, Եկ.
 Եւ զոր հարեր զիս ցաւած
 Քեզէն բռուժեա զաըրտաբեկ։
 Գիտեմ դիտեմ զի փախչել
 Արժան է քեզ առ յինէն։
 Այլ այս շըզթայքդ անարգել
 Պատեալ զինեւ ո՞ւր վարեն։
 Թէ թողութիւն ինձ չըկայ,
 Թէ չեմ գիմաց քոց արժան,
 Այլ ես չերթամ ի բացեայ.
 Ես քն եղեց յաւիտեան։
 Թէպէտ իցեմ քեզ ոսոխ
 Այլ եմ սիրոյդ բարեկամ. . .
 Երթ արդ, փախիր, և զիս թող.
 Զի անմեկին զշետ քո դամ։

Տեել Արքայութեան

Յանձուկ տեսոյդ հարեալ Յիսուս,
 Տաղոուկ են ինձ կեանք կենցազոյս.
 Ընդերկարեալ պանդուխտ օտար
 Ինձ վիշտք և ցաւք կուտին հազար.
 Առ քեզ գոչէ սիրու իմ անքաւն,
 Արքայութիւն արքայութիւն։
 Ծուխ են մնոտի աշխարհիս տուրք,
 Թատր անկայուն, պատիր հրապուրք.
 Իսկ զինչ քան զայն դառըն կասկած՝
 Թէ կորուսից երեք զԱսուած.
 Առ քեզ գառնամ գոչեմ համբուն
 Արքայութիւն արքայութիւն։
 Է՛չ, երթ աշխարհ, չկամիմ ըզքոյս.
 Վայելք հըրձուանք ի բաց հոգւոյս.
 Ոչինչ ըզքո, ոչ ինչ կամիմ,
 Ծուխ, մահ, կորուստ, աւեր յաջս իմ։
 Առ քեզ գառնամ գոչեմ համբուն,
 Արքայութիւն արքայութիւն։
 Քաղցր հայրենիք, ուր սէր ըզաեր
 Առնու վարձ, անդ երեւի տէր.
 Ո՛չ երբ իցէ ինձ, ով Տէր, երբ
 Զմոյլել ի տես քո անդ աներբ.
 Ե՞րբ ըստացայց ըզքեզ համբուն,
 Արքայութիւն արքայութիւն։

Սէր Յիսուսի

Ի Խորհնորդ սրբոյ Հաղորդութեան

Մինչ հրաժեշտ յաշխարհէս
Հովիւն այն սիրակէզ՝
Որ հոգւոյ առ ի սէր
Յանձն էառ մեռանել,
Գնայր յերկնից յառագաստ,
Զկամեցաւ ըզդառինս
Եւ զարեան իւր ըզդինս
Միայնակ թուզոււ աստ.
Եւ մինչ չեւ անդ յերկին
Երջանիկ կայանին
Աքարեալ զմեզ ժառանգս
Եւ հաղորդ յաւիտեանս,
Զանսահման իւր ըզպէր,
Ո՛չ գործոյ սքանչելեաց,
Ի յերկրի աստ ալնիեաց
Ի յաւերժ մեզ ընկեր,
Զի մի սիրա՞ որ ըլնա
Սիրիցէ յարակոյ՝
Սիրելոյն անդր ըզհետ
Նեղիցի հեռագէտ,
Ոյլ բնաւին զանձն արար
Անմեկին մերձաւոր,
Եւ հանուրց եա շընորհս
Մերձենալ յինքն յամայր:

Ի սըրբում սեղանին
Կայ փակեալ սիրելին,
Զտենչանաց սըրբոց հուր
Ծաւալեալ ընդ հանուր,
Զի վառեալ սիրակէզ
Սիրոզացն ըստուգիւ,
Ըզդեւեր և ըզտիւ
Քաղցրասցին ի վայելս:
Այլ նետից սիրամուխ
Եւ բոցցն մըշտածուխ
Որ թըոչին ի հացէն՝
Ըզդայցէ որ փորձէն.
Ո՛չ, չէ մարթ ցուրտ սըրտի
Մատուցեալ յայն նըւէր՝
Եւ անկէզ և անվէր
Դառնալ գալ յետա անտի:
Դո՞ւք անձինք գուք յաւէտ՝
Սուրբ սիրոյն ըղձաւէտ,
Պատմեցէք մեզ ըզբօցն
Երջանիկ և ըզիոց՝
Զոր սիրովն ընդունիք,
Երբ և գուք ի վայրն յայն՝
Ուր Յիսուս ձեզ մընսյն,
Սըրբութեամբ մատիչիք:
Ո՛չ սըրախս ոստիկան՝
Կերակուր աստուածեան,
Ո՞տայր ինձ անընդհատ
Կալ ի քէն անանջատ.

Քեզ՝ որ յիմ՝ իսկ ի սէր՝
ի յերկրիս աստ թագուն
Աըքավայր կաս ի տուն՝
Զըտել զմիրտ իմ ի վեր:
Յուսամ սէրդ իմ՝ յուսամ
Զքեղ յերկինս յամերամ
Զքեղ բացաւ երեսօք
Տեսանել սուր աչք:
Այլ մինչ աստ կենցաղիմ՝
ի տեսայդ այդ պարկեշա
Զըկարեմ տալ հրաժեշտ.
Եթէ ոչ մեռանիմ:

Ի Հաղորդուրիւն

Հոգի իմ, զի՞ գործեցես.
Սիրեա զսիրող քցյին Տէր,
Որ լոկ ի քէն խընդէ սէր.
Եւ տակաւին դանդաղէս.
Տես, զի առ սէր եղիկելցոյդ՝
Անչափն անհուն և բարի
Խոնարհեալ աստ ի յերկրի,
Զհացին՝ զիւրեաւ արկ ծածկոյթ.
Եւ իբր ընկեր՝ ի սեղան
Հրաւէր կարդայ կոչէ զքեղ՝
Կէնաց հացին ի վայելս,
Որով չնորհէ զանձն համայն:

Եւ զի՞նչ իցէ այլ նորուն
Զօր սիրով տալ գոյր հընար,
Կամ զի՞նչ առ սէրդ առնել կայր,
Զի զքեղ գործել իւր սիրուն:
Ո՛չ, ոչ ոչ շատ նա գըքէր
Դիմեալ ի խաչն այն աչէլ՝
Բիւր տանջանօք զանձն անմեղ
Մատնել ի մահ աննըւէր,
Մինչեւ գըտեալ ճանապարհ՝
Ըզէր սըրտին առտուածեան
Ի սըրտակից միութեան
Հաղորդելց քեղ իսպառ:
Եւ զիարդ, սիրտ իմ, զիարդ
Անբոցակէլ կաս ի հուրդ.
Յաջնքան սիրոյ զիարդ ցուրտ
Կաս տակաւին և անյաղթ:
Ո՛չ, փութա սիրտ իմ ի սէր
Մեծի սիրոյ արժանւոյն,
Որ առ ի ցոյց իւր սիրոյն
Զանձն իսկ ձօնէ քեղ նըւէր:

Առ Յիսուս եղեալ ի բազմոցի

|| Վանի երանի՛ ծալկանցդ՝ որ ցայդ և ցե-
րեկ,
Փըրկիս կացեալ առ ընթեր՝ ոչ բաժա-
նիք,

Մինչեւ անդ շուրջ իսպաս ըղկեանս վաս-
նիցէք.

Ո՛հ, ո՞ տայբ, ո՞ տայբ ինձ ընակել անդ
յաւեւժ,

Առ Յիսուսիս կալ ի տեղւոջդ Երջանիկ,
Եւ զիկեանս ընդ ձեզ անդէն հոսել սիրա-
վէժ:

Ձեզ Երանի ճրագունք, որ և անդ վառ
ի վառ

Առ արարչին և տեամն իմց բացանաց,

Ո՞ տայբ սրտիս վասել անդ ձեր ի տիպար
Եւ ձեզ նըման հալել սիրոյն ի սուրբ հալ:

Ձեզ Երանի լամբարք, ո՞ ձեր փօխանակ
Տայբ ինձ առ Տեամն իմում անդուլ անդէն
կալ:

Քեզ մանաւանդ Երանի՝ տուփ սըրբա-
տար,

Իմ սիրելոյն ծածկոյթ, քեզ բիւր Ե-
րանի,

Որ ընծայես Տեամն իմում տուն և դա-
դար.

Ո՞ քո փօխան՝ լանջացս ըգնա տայբ կըրել,

Գէթ զօր մի զսիրտ իմ գոլ անօթ տէ-
րունի,

Գոլ տուն հրեղէն, ի հուր ի սէր զիս վա-
ռել:

Ո՛հ, մի ծաղկունք, մի եւս ճրագունք,
մի եւս տուփ.

Երանեգոյն եմ ես, երբ Գառն այն
պարտ

Տաղաւարի սիրով ի սիրտ իմ անծուփ:
Եւ ես աղկաղկ որդնուկ, զիարդ զմեծդ
Աստուած:

Առնում ի գոյզն հացկին, և հիմ, և զիարդ
Զայրիմ անդէն, ըմեռանիմ ըզմայլած:

Երթ հոգիդ, Երթ, և ըզմուսով անդ
քոյին:

Հանդոյն թիթռան՝ ի սէր, հաւատս, առ
սիրոյդ:

Թեւածելով այրեաց մընչմամբ սըրտագին
Եւ զերջանիկ օրն՝ Երբ ժաման առնէ Տէր
Յանվերջ վայելս, գիրկս արկ անբաժ ի
հոգւոյդ:

Գոչեաց, « Ըզմէր կամիմ ես, Տէր իմ, ըզ-
մէր » :

Յետ Հաղորդուրեան

Երկըրսկագեմ քեզ

Ո՛վ հաց Երկնային,

Որ ի քող քոյին

Ըզմէրն իմ ծածկես,

Ո՛վ գանձ իմ սիրոյս,


Տենչալիդ Յիսուս,

Որ զքեզ երբեւ հաց

Տաս քոց սիրողաց:

Ո՞վ կենաց սընունդ՝
 Որ անմահութեան
 Ջմարմին և զարիւնդ
 Զօնես գրաւական.
 Կեամ ես, այլ ես ոչ,
 Տէր կեայ յիմն ոգւոջ,
 Հովուեալ զիս ուզբէ,
 Երջանիկ առնէ:
 Ո՞վ կապանք սիրոյ,
 Որ կապէք զծառայս
 Ընդ սուրբ տեառն իւրոյ,
 Խնձ քան զանսէր կեանս
 Լաւ է մեռանել.
 Եւ առ ի սիրել
 Լոկ ըլտիրովն իմ՝
 Ես ընդ կեանս հաճիմ:
 Քեզ ով հուր անծախ,
 Որ վառել ցանկաս
 Միսս և սիրտ խաղաղ,
 Յանկայ և սիրսս այս:
 Ե՛կ, Տէր, Եկ և յիս,
 Բորբոքեա զհոգիս.
 Թէ յանդուգի եմ ես,
 Դու սիրով դըլես:
 Ո՞վ նետ սիրաթեւ,
 Դու զմեզուցելոյս
 Առ վրէժ արդարեւ,
 Դիր վէրս իմ հոգւոյս
 Որ չարեայ է պարտ,
 Թող նա մեռցի արդ

Վասն որոյ դու Տէր՝
 Ուեռար յանբաւ սէր,
 Քեզ՝ ով սիրելիտ,
 Որ յայսքան շըղթայս
 Կտպեցեր զիս պինդ,
 Քեզ տամը ըզսիրտս այս.
 Ո՞վ սէր անարտա
 Քեզ կամ միշտ պատրաստ.
 Որ զքեզ ինձ ետուր,
 Առ զիս քեզ տրիտուր:
 Որդ միսս ինձ յերկին՝
 Գալոյ ինձ առ քեզ
 Ի սէր անմեկին
 Երես առ երես:
 Յայս հաւատամ, Տէր.
 Ոչ սըտէ եթեր,
 Որ այժմէն իսկ բնաւ
 ինձ պարգեւեցաւ:



ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ

ՓԵՍԱՅԻՆ ՅԻՍՈՒՄԻ
ԷՆԴ ՀԱՐՍՆԱՑԵԱԼ ՀՈԳԻՈՑ

Փեսայն Յիսուս
առ հարսնացեալն Հոգի

Բայ բնի, ույը իմ.

Բայ ինձ քոյր իմ, բաց
Ըզմըտիդ գըրունս.
Զ' ի քէն կալ ի բաց,
Անմարթ է սիրոյս:
Թէպէտ ապերախս՝
Այլ սիրեմ ըլքեղ.
Եկ, համո՛ ինձ արդ
Ըզմէր առ իմ սէրս:

Հարսնացեալն հոգի առ Յիսուս
փեսայն

Ելքօբորին իմ խօսեցաս, և որովան իմ
խոռոշեցաս ի նա.

Ի ձայն սիրելոյ
Օքքային իմոյ՝
Սիրա իմ խռովեցաւ
Եւ աղիս գելաւ.
Ո՛վ, քանի՛ սփոփումն
իցէ անպատռում,
Թէ բնակել ընդ իս
Հաճի անձկալիս:

Երդմնէցուցանեմ պյեւ, դուքերն Երուսաղէմ, էլու
յառնիցէք, պարթուսալիք պէրն, մինւն իսմեցի.

Երդմնէցուցանեմ
Ըզմէղ, քուք սիրուն,
Պատմեցեղ՝ մաղթեմ,
Թէ ի պրակ մայրւոյն

Կամ ի դաշտս ուրեք
Զանձկալին տեսէք:
Ո՞չ, եթէ գըտչիք՝
Ասացէք նըմս,
Զի նեղեալ սըրտիկս
Յիւրմէն ի բայեայ՝
ի սէր խանդակաթ
Տուայտի անընդհատ:

Եւբօրորդին իմ սպիտակ է և իսրիք, ընպիշտալ
ի բիւրուց.

Թէ զնորա գիմաց
Խնդրիցէք նըշան,
Գեղսին և շնորհաց
Բոլորն է աման.
Սպիտակն և կարմիր
Սիրելոյս ի դէմն՝
Յարշալուսցն ծիր
Սըֆոեալ հրաշատես:
Յնարեալ ի բիւրուց
Փեսայն իմ անբիծ:



Խնդրէցի չնա և ու գորի.
Ուր ես անձկալիդ,
Անձկալիդ իմ, րւր.
Ե՞րբ նեղեալս այս սիրտ
Տեսցէ զփեսայն իւր:
Խընդրեմ՝ և փախչիս,
Կոչեմ, ձայն չըտաս,
Լամ ես, և ժըպտիս:
Եւ մինչեւ ցերք այս:

Դաշիր Եւբօրորդի իմ ի վերաց մերանց խնձբերաց.

Այլ փախիր և երթ
Ո՛ եղբօրորդեակ,
Թէ առ ձըգել գչետ
Փախչիս սիրունակ.
Թէ նդ լեառն ամայի
Թէ յանձուկ հովիտ
Նըսակս մեկուսի,
Քաղցր իմ անձկալիդ,
Վարեալ ի սիրոյ
Անդր հասից շտապաւ,
Միայն ընդ մենց
Խօսեցայց անձկաւ:

Զգեա ուիս, սմէնք հոպաց իազաց քայ ընթասցուք.

Ի հոտ քո քաղցրիկ
 Տէրդ իմ անձկալի,
 Ջըգեա զիմ' սըրամիկ
 Որ ի քեզն հալի.
 Զի սիրոյդ ի ձեռս
 Կապեալ կաթոպին,
 Հանգիցէ և սէրս
 Ի քէն անմեկին:

Փեսայն

Ես ծառի դաշտաց, լուսն հովաց.

Ես ծաղիկ դաշտաց
 Ընտիր և պայծառ,
 Ամէն խընդրողաց
 Տամ' զանձն իմ յօժար:
 Ես չուշան հովաց,
 Դիւրահուպ հեղոց
 Ու անձանց խոնարհաց,
 Մարմանդին ի ծոց:

Որ մաքուր ձեռամբ
 Ցիս մերձեսցի զոյշ,
 Կացից անթառամ
 Ի գեղ իմ քընքաց:

Պարսկէն ժախէալ ուրի իմ հարսն, առափումն ու
 Շըսկար նոռնէնաց.

Ու հարսն իմ և քոյր,
 Ջընաղ գու պարտէզ,
 Ի տէս և ի բոյր,
 Ի ծաղկունս պէսպէս,
 Եւ առ սէր օտար՝
 Փակեալ գըլիսովին,
 Իմ եւելթ դադար
 Եւ իմ ես բաժին.
 Երկնընծայ պըտուզք
 Չօնին ինձ ի քէն,
 Իզձք քո սըրտաբուզիկ,
 Որ զիսն ըզմայլէն:



Դաշն սաւս ո՞ւ յինէն , վասն ո՞ւ բոքա ընդու-
դուցին ունս .

Այլ մի յիս հայեր
Կետաձիգ աչք՝
Որ սիրով գան հիռ ,
Զել լրցայ վիրօք .
Դպան զիս յերկնից
իջուցին ի վայր ,
Ընդ քեզ զուգակից
Կալ յաւեժաբար :

Սրբ , եկ գեղեցին իմ , աղաւնեակ իմ , ընդ հովանեաւ
վլիւ , առ պարսաւաւ պարսիւթ . եւեւեց
ինչ պետս ո՞ւ , և լսեց արա ինչ պարբառ ո՞ւ .

Եկ սիրուն հարսնեակ ,
Քաղցր իմ աղաւնեակ ,
Եկ մուտ , ստացիր զիս ,
Հանգիր ի սըրտիս :
Ո՛չ , մի յիս հայեր ,
Եւ մի նոր իս խօսիր՝
Զե ձայն քո քաղցրիկ
Դերեց զիս յերեք .

Ասա ինձ միայն
« Սիրեմ զիմ վեսայն ,
Սիրեմ կալ ընդ քեզ » ,
Եւ շտա է ինձ սէրս :

Հարսն

Մրար սպանվին է եպօքորդին իմ ինչ . Ի յէջ
սպեանց ինց հանգիցեւ .

Եւ զով բաց ի քէն
Փեսայդ անձկալի ,
Սիրել կարացէն
Կիրք իմոյ սըրտիւ :
Քաղցր ես և աղնիւ .
Զինչ ծըրտի ստաշին .
Հանդուցից տենչիւ
Ըզքեզ յիմ սըրտին :

Որ սրածէն ի յէջ լսաւանց .

Որ յանբիծ արօտ
ի մէջ շուշանաց՝
Սրածես ըզհօտ
ի հոյլս ուղղութեանց .

Ե՛կ, և սիրոյ քում՝
Բեր առհաւատչեայ՝
Զծաղկունս ցօղաթուրմ,
Հաճոյ ինձ ընծայ:

~~~~~

Բնուան է իբրև պման սեր.

Բառնայ սէր ըղկիրս  
Մահուն ի տիպար,  
Եւ թողեալ զերկիրս,  
Գործէ երկնապար.

Եւ ըղսիրողին  
Ըղսիրտ փոխէ ի յայլ,  
ՅԱսոււած և յերկին  
Ու յայլ ինչ անձկալ:

~~~~~

Թարիւ նորա իբրև դմոիւն բայց հրոյ, իիսպ է
իբրև դժծովս նախանձ.

Զ' իբրեւ հուր է սէր
Բոցակիզուլ զմարդ.
Դիզոնայ յեթեր
Վառեալ բարդ ի բարդ.
Եւ շատացեալ ոչ
Ըղսիրտ և զհոդի

Այլրել ի մի բոց
Եւ ծախել ձըգնի.
Որպէս դըժոխոց
Հուր չէ բաւական,
Եւ ոչ սիրոյն բոց
Լզձակաթ գեղձման:

~~~~~

Ահասասի նա էից յայնկոյս որմայն, իարիառեալ  
ընդ պարունակն, հայեցեալ ընդ մանդայու-  
պապն, և առէ. Արի, էլ մըջաւար իմ, գէ գէ-  
ցի իմ, աղաւանի իմ.

Ահա նա յայնկոյս  
Թաքուցեալ դիտէ,  
Թէ ստ ըղձից հոգւոյս  
Աիրեմ ի սըրաէ:

Ահա ձայնէ. Ե՛կ  
Ընտրեալզ իմ սիրուն,  
Զի ձմերային խէթք  
Անցին սահեցուն.

Ամպք, անձրեւք, մըրբիկք  
Զեն այսուհետւ,  
Անցին արհաւիրք,  
Աէր ծագեաց արեւ:

Գորի առ սկզբաց անձն իմ. ի ալայ պատ, և ու  
թողից :

Ո՞չ, գըտի, գըտի,  
Փեսայդ, գըտի զըեղ,  
Զանձկալիդ սըրտի.  
Երջանիկ եմ ես,  
Ընդ իս յայսմէետէ  
կեցցես միշտ ընդ իս.  
Եւ յայս իմ սըրտէ  
Երբէք մի մեկնիս :

---

Տարաւ ունս արժայ ի ունեակ այգուայն .

Տարաւ զիս արքայն  
ի ուըբին սենեակ,  
Լի անմահութեան  
Գինեաւ անապակ:  
Սենեակն է սիրտ իւր,  
Եւ սէրն է գինեակն.  
Քաղցր ի համը ու ի բայր,  
Յըմբէլ ախորժակ:

---

Այս հիւսիսի, և ե՞ւ հարաւ, զնված ի պարտեր իմ,  
և բարեսցին խռանի իմ.

Ո՞վ գուք կենցաղոյս  
Խորհուրդք սուտ և ցուրտ,  
Մի գայք ըզհոգւսիս  
Խռովել չանգիստ սուրբ.  
Ո՞յլ սիրոյ հողմիկ,  
Դու հրեցէն ըլնչով  
Երնչեալ յիմ սըրտիկ,  
Վառել բացով քով.  
Ի ըլնչմանցդ հեղիկ  
Բուրեսցեն անդուստ  
Լաւութեանց, փափկիկ  
Գեղ բուրմանք հարուստ:

---

Հասդարեցէտ ոիս ծաղիանք, իւսպէցէտ յիս ինչոր,  
ուն մի եմ ես սիրով:

Ո՞վ սուրբ տենչանք գուք  
Պատեաւ ըզսըրտիւս,  
Ո՞վ սիրոյ պըտուզք,  
Կազզուրեցէք զիս.

Ահա սիրտ ի հուր  
ի սէր նըւազլիմ.  
ի սէր երկնասուր  
Թալանան կեանիք իմ:

---

Ես ննջեմ, և սիրտ իմ աբթուն կայ.

Ահա նընծեմ ես,  
Եւ սիրտս արթուն կայ.  
Սէրն անդուլ յեթերս  
Առ սէր իւր սլանայ:  
Ո՛վ քուն անուշակ,  
Հանգիստ երջանիկ,  
Լըռութիւն համակ,  
Զայն սիրոյ մենիկ:

---

Պատմեա ինչ զոր սիրեաց անցն իմ, սոր հովսես, սոր  
հանգույանես ի մշտեկ.

Երանեալ հոգելք,  
Որ սստուածութեամբ  
Յերկինս պարարիք  
Անահ և ողջամբ,  
Ո՛չ, Երբ ցուցիք ինձ  
Զանձկալին սըրտիս.

Ըզգանձն իմ անբիծ  
Յորոյ սէր հալիմն:  
Ասմ, աղաչեմ,  
Ո՞ւր հանգչիս, մվ Տէր,  
Ո՞ւր զսիրտն երկնաձեմ  
Արածես ի սէր:  
Ո՛չ, միայն յերկին  
Յերկինս պարզերես  
Դէմք սիրոյն յայտնին  
ի յաւերժ վայելս:

---

### Փեսայն

Մի յարսունըլին և մի պարասայանիլին զնո.

Նընջէ սիրելին.  
Գուն իւր քաղցր իցէ.  
Մի մօտիք ոըրտին,  
Գուն սիրոյ նընջէ:  
Նընջէ խաղաղիկ  
Ծանրացեալ ի սէր.  
Այլ ոչ, քուն անդ չիք,  
Սիրտ իմ կայու ընթեք:

---

Ո՞շ է աս որ ելաւ գայ յանապափէ, իբրև ոծուին  
Ժառացացէաւ բացբացէաւ:

Ո՛, քանի՛ պայծառ  
Անըիծն այն հոգեակ,  
Որ ինձ սիրաբար  
Կեայր իբր աղաւնեակ.  
Հարեաւ քազցր ի ոէր՝  
Ըստրափիկն եկէզ,  
Քաղցրիկ և մընչէր,  
Փորձէր թըսլէս հեզ.  
Արդ իբրեւ հանդարտ  
Ծուխ բոյածաւաւ  
Դիզեաւ բարդ ի բարդ,  
Խընկէ զօդ ծալծաւ:  
Քանի՛ ինձ փափուկ  
Հոգին այն անըիծ,  
Որ առ սիրաս անձուկ  
Թէւէ սիրալից:

Սրացացէեր ուն ուր իմ հարտն, մոշ ակամք ունվաւ  
մով այստամանէիաս պարանոցի ու.

Սրացուցէր զիս  
Քոյր իմ և հարսնեակ,  
Վէրս եղեր յոգիս:

Ի սիրոյդ սըլաք:  
Անձուկդ և փափադ  
Դիմեւ ինձ ի վեր,  
Ե՛կ և աւս հարսնեակ,  
Ի՞ր եղին յիս վէր:

Ե՛կ ի Լիքանանէ հարտն, Ե՛կ այսը:

Ե՛կ յերկուեր վըշտաց,  
Ուր տանջէ զսոգիս,  
Անձուկ սիրելեաց  
Ե՛կ հարսն իմ առ իս.  
Աստ վարդ և շուշան՝  
Հարսնացէաւ հոգւոց,  
Պըսակ հրաշտական  
Յերանութեան ծոց:

Դիւ շիս իբրև ովնիս ի վըշտ սըլաք ու.

Եւ ցորչափ այդրէն՝  
Հարսն իմ, յամիշէս,  
Ահա փոխարէն՝  
Սըրտիդ սիրակէզ,  
Զեմ պանկէր ճըշդրիս  
Փորագրէաւ սիրով

Դիր վերայ սըբախտ,  
Անքակ ունելըվ.  
Եւ սիրելոյդ զշեմ՝  
Քոր խոցեալ գիտես,  
Ի խաչ փըրկաւէա՝  
Մեռիր զուգապէս:



ԱՌ ՅԻՍՈՒԽ ՄԱՆԿԻԿ

Ի յաստեղաց իջեալ գաս՝ Տէրդ եթերաց՝  
Լ քարանձաւ ցըրտասարսուու ձըմերաց,  
Եւ դողաս ողորմուկ,  
Ո՛վ Աստուածդ իմ՝ մանուկ.  
Քանի՛ ծանր եղեւ, Տէր,  
Այսդոյն քո առ իս սէր.  
Քեզ՝ որ հաստիչ տիեզերաց ես համբուն,  
Պակասեաց հուր, քեզ պակասեաց վեր-  
արկուն:  
Ո՛վ ընտրեալ դու մանուկ,  
Տնանկութիւնդ այդ անշուք,  
Ինձ զիարդ է սիրուն,  
Երբ առ սէր կաս անտուն:  
Զայւիտենից թողեալ քո զծոց հայրենի  
Եկեալ գընիս ի խոյթ խարձից վայրենի,  
Ո՛վ քաղցրիկ սէր սըբախտ,  
Ի սիրոյ յով ձըգիս,  
Վասն ոյր այդ վիշտք, Յիսուս...  
Առ իմ սէր, իմ, հիգոյս:  
Այլ եթէ նդ վիշտ հաճեցար Տէրդ իմ  
Աստուած,  
Իսկ առ իմէ ճիսս այս և ցողք արտա-  
սուաց:  
Ա՛չ, Յիսուս, իմացայ  
Սիրեցեալդ իմ փեսայ,

իմացայ, ոչ առ ցաւս՝  
Ոյլ ի սէր եւեթ լսա:  
Վասն իմ վասն իմ ապաշնորհիս լսա գու-  
սէր,  
Եւ յետ սիրոյդ իսկ՝ գըտեալ զիս ան-  
նըւէր:  
Սիրեցեալդ իմ, մի եւս.  
Թէպէտ ցուրտ էլի ես,  
Այլ արդ քեղ փափագեմ.  
Մի լար, մի, զքեղ սիրեմ:  
Նընջես, մանկիկ, նընջես, այլ սիրտ քո-  
զուարթուն  
Ոչ նընջէ, ոչ, վասն իմ հըսկէ միշտ սիրուն:  
Ո՛վ անմեղդ իմ գառնեակ,  
Յի՞նչ խորհիս արդ միակ.  
Ո՛վ սէր, զգամ զի ասես,  
« Մեռանել փոխան քեղ »:  
Եւ գու Տէր, գու զիմ մեռանել մահ կա-  
միս.  
Եւ յայսմ հետէ ո իմ լիցի սիրելիս...  
Ո՛չ, Մարիամ, մի ցանուս,  
Թէ սիրեմ խոն զթիսուս.  
Թէ չգիտեմ սիրել, մայր,  
Սիրեա զնա նոր իմ յամայր:

Առ մանկիկն Յիսուս ի Ալսորի  
Ո՛վ, քանի՛ զքեղ սիրեմ, Յիսուս բարե-  
գութ,  
Զամէն սիրոյ արժանիդ, մահ ինձ քաղցր է  
Ընդ առ ի սէր իմ մեռելոյ Աստուծոյդ:  
Աշխարհ խարկան, ի բաց ի բաց կաց յի-  
նէն,  
Ի սէր մանկանս կապեալ զնա սիրտ իմ  
սիրէ  
Որ մանկաբար եկեալ ընդ իմ ծնաւ աս-  
տէն:  
Զոփան մնդամբ քո, ով մանկիկ, արտա-  
քուստ,  
Այլ ի ըլքնաղ սըրտիդ՝ վասն իմ հուր  
վառի.  
Տէր մանկացոյց, սէրն ըզքեւ ած վիշտ  
հարուստ.  
Քեղ սէրն յաղթեաց և կաշկանդեաց  
խանձարբովէ.  
Եւ սէր տեսցէ դիմեալ ըզքեղ քաջարի՝  
Ախտակըլով վասն իմ՝ ի մահ անողոք:

Ի Ար Յիսոսի

Ո՞վ երանի՛, բեւը երանի  
 Որ մեռցի զմահ խոցեալ ի սէր,  
 Ծնդ գեղանւոյն և արժանի  
 Ամէն սիրոյ՝ նդ Աստուածն իւր տէր.  
 Այնպէս քաղցրիկ է և սիրուն,  
 Որ առ նովաւ գոհար, ծաղիկ.  
 Եւ աստեղաց փայլ շողովուն  
 Խաւարանան դառնան ի չիք:  
 Ինքն ելանէ ի յորս սըրտից.  
 Այն ինչ թռուցեալ խոցէ փրքին,  
 Սիրտք վիրաւորք լեւալ սիրալից  
 Սիրեն զշարովըն կաթոդին.  
 Առ ի խոցել զշոդիս սիրուն՝  
 Այլակերպի ձեւօք օտար,  
 Զի ձըրեսցէ միշտ անձկագոյն  
 Զանձինս՝ առ սիրտ իւր սիրաբար:  
 Բանն աստուածեան իջեալ առ մրգ՝  
 Երեւեցաւ ի կերպ մանկան,  
 Եւ ամիկար ճըշիւքըն հեղ,  
 Ըզսէր հայցէր, ըզսէր միայն.  
 Ապա ըըքնաղ զերթ պատանեակ,  
 Ապա հիւսան ցուցաւ մանուկ.  
 Ոչ ամաչեալ ինչ արբանեակ  
 Գոլ արուեստից անարդ ւանշուք.  
 Ապա կապեալ իբր ամսպարիշտ՝

Հարսին իւրոյ ել ընդ առաջ,  
 Կատարելով ըզկեանսն ի վլատ  
 ի հոյլ ցաւոց, ցամաք ի խաչ.  
 Ապա նդ հացին այն ընդ քօղով  
 Անշըքաբար ելեալ եկաց  
 իւր սիրելեաց հրաւեր տալով,  
 Զըդէլ զնոսին ի ծոց իւր քաց:  
 Զարուեստ սիրոյ գիտէ զամէն,  
 Յորսաւ ըզսիրտ, կամ սէր յարգել.  
 Փիրան և վաստակ՝ ահ չարկանեն,  
 Եւ յանձն առնու զբնաւն անարգել.  
 Մերթ փեսային նըման սիրով  
 Ակնարկէ քաղցր և ըզձաւետ,  
 Եւ իրսաւութեան մերթ երեսով,  
 Այլ միշտ սիրել ցանկայ յաւետ:  
 Կա ինքն և զիմ սիրոյն ի հուր  
 Կախ տարփացեալ վասեաց սըրտիկ,  
 Ապա ի գրաւ սիրոյն առ իւր  
 Կախան ձեւով պահէ այժմիկ:  
 Արդ ի բաց երթ յինէն աշխարհ,  
 Քեզ այլ ըըտամ սէր, ըըտամ փառս.  
 Զի լաւագոյն սըրտիս խապառ.  
 Գըտի քան զքեզ սիրոյ պատճառս:



Խանդաղատանք առ Յիսուս

Յիսուս, գանձգ իմ բարի,  
 Յիսուս գանձգ իմ բարի,  
 Եւ փեսայդ անձկալի.  
     Բարութիւնդ անհուն,  
     Կեանք իմաց կենաց,  
     Եկ ո՛վ խընդութիւն,  
     Սիրով զիս այրեաց:  
 Յիսուս գանձգ իմ բարի,  
 Յիսուս գանձգ իմ բարի,  
 Եւ փեսայդ անձկալի.  
     Քեղ լոկոյ ցանկամ,  
     Հեծեմ կականմամբ,  
     Սիրտ իմ յարաժամ  
     Քեւ այրի ողջամբ:  
 Յիսուս, գանձգ իմ բարի,  
 Յիսուս գանձգ իմ բարի,  
 Եւ փեսայդ անձկալի.  
     Ըզալ կամիմ միշտ,  
     Քանզի քեղ մեղայ.  
     Մատնիչ ամպարիշտ  
     Մեծապէս յանցեայ:  
 Յիսուս, գանձգ իմ բարի,  
 Յիսուս գանձգ իմ բարի,  
 Եւ փեսայդ անձկալի.  
     Ես մահու ցանկամ,  
     Երբ վասն իմ մեղաց

Զմահ քո գառնահամ  
 Յիշեմ և ըզնաչ:  
 Յիսուս, գանձգ իմ բարի,  
 Յիսուս գանձգ իմ բարի,  
 Եւ փեսայդ անձկալի.  
     Ցոյս իմ, յայսմ հետէ  
     Տուր կալ ընդ քեղ հաշտ.  
     Մահ ինձ լաւ իցէ  
     Քան կեանքս ապերախտ:  
 Յիսուս, գանձգ իմ բարի,  
 Յիսուս գանձգ իմ բարի,  
 Եւ փեսայդ անձկալի.  
     Այլ զօրհանապալ  
     Ե ինձ բիւր ոսոխ.  
     Դու զերծն զակրտս այս  
     Ի քոյդ ծածկեալ կող:  
 Յիսուս, գանձգ իմ բարի,  
 Յիսուս գանձգ իմ բարի,  
 Եւ փեսայդ անձկալի.  
     Զիս ի քո կապանս  
     Կապեա պինդ անլոյժ,  
     Մինչ ի կետ մահուանս  
     Ոացցուք յայս հանգոյց:



Ի ԶՈՐՉԱՐԱՆԸ ՅԻՍՈՒՄԻ

Յիսուս, ո՞ խիստ կապովեգդ այդպէս  
իբր յանցաւոր պըրկեաց ըզքեզ: —

Ապաշընորհ իմ հոգիս,

Ո՛չ, Տէր իմ Տէր, գըթա յիս:

Յիսուս, ո՞ քաղցըր քոց դիմաց

Զանկարեկիր տպուակն էած: —

Ապաշընորհ իմ հոգիս,

Ո՛չ, Տէր իմ Տէր, գըթա յիս:

Յիսուս, ո՞ գիրգ իրանաց քոց

Դաշնաբար եւս հարուածու և խոց: —

Ապաշընորհ իմ հոգիս,

Ո՛չ, Տէր իմ Տէր, գըթա յիս:

Յիսուս, ո՞ զիսչն այն սոսկալի

Ծանրաւեանեաց յոււր նազեզ: —

Ապաշընորհ իմ հոգիս,

Ո՛չ, Տէր իմ Տէր, գըթա յիս:

Յիսուս, ո՞ զըռ քաղցըրիկ բերան՝

Ա՞ գանցացոյց լշկեաւ դաժան: —

Ապաշընորհ իմ հոգիս,

Ո՛չ, Տէր իմ Տէր, գըթա յիս:

Յիսուս, ո՞ զուրբ քցին ըլձեռու

Սույց ընդ փայտն յանդութ բեւեռու: —

Ապաշընորհ իմ հոգիս,

Ո՛չ, Տէր իմ Տէր, գըթա յիս:

Յիսուս, ո՞ զոտըս քո խոնջեալ

Բեւեռապինդ արար մընալ: —

Ապաշընորհ իմ հոգիս,

Ո՛չ, Տէր իմ Տէր, գըթա յիս:

Յիսուս, ո՞ նետ սիրան այն սիրոյ տուն

Գեղարգնահար հան սուրբ արիւն: —

Ապաշընորհ իմ հոգիս,

Ո՛չ, Տէր իմ Տէր, գըթա յիս:

Ո՛վ Մարիամ, զօրգեակ սիրոյդ,

Ո՞ սպան էլիք մերկ կողոպուտ: —

Ապաշընորհ իմ հոգիս,

Ո՛չ, Մարիամ, գըթա յիս:

Առ Յիսուս վշտակիր

Ո՛ անդութ խարազան՝

Որ զքաղցըրիկ Տեառն իմում

Կըլեքես սուրբ իրան՝

Կըտտանօք ապառում,

Դադարեաց, մի եւս այլ

Սիրելոյս իմ ցաւ տալ.

Ի բաց լէր ի բաց լէր,

Յիսուսի մի հըպիր,  
Այլ հոգւոյս վասցւեր  
Ըզկըսկիծ վիրաց դիր:  
Ո տատասկիք վայրենիք,  
Որ զայդքան ըզկըսկիծ  
Բոլորեալ և ածիք  
Ի գլուխ Տեառն իմ անբիծ.  
Ի բաց լիք այլ մի եւս  
Ածշիք ցաւս աղեկեղ.  
Ի Փրկչէս բաց կացէք,  
Եւ հոգւոյս ատկերախտ  
Ըզիսայթուած ձեր ածեք,  
Զի վրշացն՝ ես եմ պարտ:  
Ո գազան գուք բեւեռք,  
Որ Փըրկչիս անբարբառ  
Զաստուածեան ոտս և ձեռք  
Պատառէք չարաչար,  
Ի բաց լիք, մի այլ եւս  
Ածշիք ցաւս աղեկեղ.  
Ի բաց յիմ սիրելոյն.  
Ըզդէմս յիս գարձուցէք,  
Որ պատճառ է ցաւոյն,  
Ի հոգիս, յանձն իմ հէդ:  
Ո՞վ գեղարդն ահաւոր,  
Որ ընդ կող տէրունի  
Յերաշխէս ի ցաւ նոր  
Անցանես թափ բըռնի,  
Ի բաց կաց, այլ մի եւս

Դիցես ցաւս աղեկեղ.  
Մի այլ զՃէլին իմ խըզեր.  
Ես վըտացն եմ պատճառ.  
Յիս գարձո զըոյին վէր,  
Ես տարայց կամակար:



ԵՐԳԻ

## ԱՌ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ



### Առ Մարիամ յոյս մեր

Ո՛վ իմ յոյս գեղեցիկ,  
 Մարիամ սէր քաղցրիկ,  
 Հաշտութիւն իմ ես գու,  
 Զահ կենաց լուսատու:  
 Երբ ըզքեղ, Մարիամ,  
 Երբ ժիշեմ կամ կարդամ,  
 Խայտան խինդք ի սըրտիս  
 Եւ զմայլմունք ի հոգիս:  
 Թէ խորհուրդ ինչ տալտուկ  
 Ա,ծէ նդ միաս իմ շըշուկ,  
 Ի լուր սուրբ քո անուանդ  
 Հալածի անդ և անդ:  
 Ծովածուփս յայս կենցաղ

Դու ասազիկն ես ծիծազ,  
 Ա,ո հոգւոյս իմ նաւակ  
 Ա,ուանորդ վերկանակ:  
 Ի չըքնազգ հովանի  
 Պաշտպանիմ, Տիրուհի,  
 Ընդ նովաւ կեանքս անցցեն,  
 Եւ մեռայց ես անդէն:  
 Ես երթայց թէ ի մահ  
 Ի սիրոյն իմոյ պահ,  
 Մարիամ, գեղեղ յեթեր  
 Սիրեցից ի նոյն սէր:  
 Արդ ըզկապ քո կարկառ,  
 Պատեա զսիրտ իմ խոպան,  
 Զի լինիմ սիրոյ սարուկ  
 Եւ անքակ կամ ուխտիւք:  
 Ընկալ զայս սիրտ, չէ իմ,  
 Գեղ տամ, քեղ նըւիրիմ,  
 Ո,ո, մատու Բարձրելոյն  
 Զպահանիչեմ այլ ըլուսոյն:

### Առ Մարիամ մայր գրուրեան

Բարեսպաշտիկդ և մաքուր  
 Ո՛վ Մարիամ գեղանի,  
 Վկայեն հոգիք ընդհանուր,  
 Զի քեղ նըւման մայր քաղցրիկ,  
 Աշխարհս երբեք չետես, չեք:

Ո՛վ երանեալ գու մայրիկ  
 Երկնից պարզեւ գեղեցիկ,  
 Այդ գըթութիւն քո անհուն  
 Քանի՛ պոյժառ ցոյս սըրտիս,  
 Քանի՛ Նըրճուանս ածէ յիս:  
 Բարեպաշտիկ և մաքուր  
 Ո՛վ Մարիամ գեղանի,  
 Վկայեն հոգիք ընդհանուր,  
 Զի քեզ նըման մայր քաղցրիկ  
 Աշխարհս երբէք չետես, չիք:  
 Ո մայր հաստէին աշխարհի  
 Եւ բոլորից թագուհի.  
 Ո ետես ո զայն լլւաւ,  
 Եթէ երբէք ոք տըխուր  
 Դարձաւ ի քէն ձեռն ի զուր.  
 Բարեպաշտիկ և մաքուր  
 Ո՛վ Մարիամ գեղանի,  
 Վկայեն հոգիք ընդհանուր,  
 Զի քեզ նըման մայր քաղցրիկ  
 Աշխարհս երբէք չետես, չիք:  
 Ո՛վ մայր գըթած, քեզ մաղթեմ,  
 Քեզ ժըտիմ, մայր սիրածեմ,  
 Լեր բարեխօս ինձ հիգոյս  
 Որ զքեզ սիրեմն ի սըրտէ.  
 Սիրով հիւծիմ յայսմէտէ.  
 Բարեպաշտիկ և մաքուր  
 Ո՛վ Մարիամ գեղանի,  
 Վկայեն հոգիք ընդհանուր,  
 Զի քեզ նըման մայր քաղցրիկ  
 Աշխարհս երբէք չետես, չիք:

Ո՛վ մայր կարօղ, մայր հըջոր,  
 Դիմէ աշխարհը բոլոր  
 Զի ոչ զլանայ ինչ Յիսուս  
 Յամենայնէ զոր իսլուգիւս,  
 Որչափ և երբ կամիս մեզ.  
 Բարեպաշտիկ և մաքուր  
 Ո՛վ Մարիամ գեղանի,  
 Վկայեն հոգիք ընդհանուր,  
 Զի քեզ նըման մայր քաղցրիկ  
 Աշխարհս երբէք չետես, չիք:  
 Ո՛վ մայր սիրոյ, մայր սիրոյ,  
 Ինձ որ մեզայս Աստուծոյ,  
 Հայցեա զսիրոյն հուր սաստիկ,  
 Զի ընդ սիրոզն իմ Աստուծած  
 Սիրով իսպաս զուգեցաց,  
 Բարեպաշտիկ և մաքուր  
 Ո՛վ Մարիամ գեղանի,  
 Վկայեն հոգիք ընդհանուր,  
 Զի քեզ նըման մայր քաղցրիկ  
 Աշխարհս երբէք չետես չիք:  
 —  
 Խանդաղատանը առ Մարիամ  
 ի Տիրուհոյն սիրելոյ կապիմ ի սէր,  
 Որոյ գթալիք ըլքիտէ սիրտն անարդեւ  
 Եւ զանարժան սիրտ, ձգէ զամէն ի վիր,  
 Յորժամսիրոյն սըրբոյ զնա տեսոցէ ընտեւ:

ի բարձրութիւնս Եթերին բազմի դըշ-  
խոյ,

Եւ ի բարձանց արձակէ աչըս գըլթած  
Ոյց ի ստորեւս հառածեալ իւրըն սիրոյ,

Անձկոս աչօք փափագեն նորայն դիմաց:  
Կոյսն այն մաքուր, ըլքնաղ կոյսն և գե-  
ղանին

Զոր յաւիտեանց տէրն ընտրեաց սիրոյն ի  
մայր,

Եւ հարմանացոյց յարազուարձ առադաս-  
տին,

Կոյսն այն ըլքնաղ՝ գողացեալ ըզսիրտս  
էառ:

Ո՛չ, Երբ իցէ աեսանել ինձ զամէն սիրտ  
ի գեղեցիկ թագուէւոյն վասեալ ի սէր.

Երբ ի ըրթանց ընդ հանուր հնչեսցէն  
կիրթ.

Յանուն նորին՝ օրհնութիւնք և երգք ի  
վեր:

Երբ ի ծայրից սահմանաց երկրիս լըրիւ-  
թրդ ամբարձցի գեղգեղեալ միտքարբառ,  
Թէ կեցցէ մայր մեր, կեցցէ մայրն յան-  
մուտատիւ.

Յամայր կեցցէ զոր սիրեաց Տէր մեր իս-  
պառ:

Խընդրեսցէն այլք՝ թէ գըտցեն՝ զոք սի-  
րացին,

Եւ սիրեսցէն թէ սիրել կարեն յանդորր.  
Ես ըղձաւոր եմ առ այս իմ գեղանին

Որ զանմահին իսկ վասեաց ըզսիր բոլոր:

Ով սիրեցեալ դու գողացիկ, ով Մա-  
րիամ,

Ըլքազցուենիդ աղէ զձեւըն քո կարկան,  
Զըգեա զարտիկս որ անձկայ քեզ յամե-  
րամ,

Զըգեա, ի բոյն բարձրացո ի սուրբ կամառ:  
Ու այնու սիրոյն բորբոքեա անծախ բո-  
ցով

Որով վասեալ ի սէր դու կաս և կիզուս.  
Տուր և ինձ, տուր երջանիկ սիրոյն ի ծով  
Բոցակիզել, Մայր, ի քեզ և ի Յիսուս:

### Առ Մարիամ մայր մեր

Ի յերկնաբնակ գահոյից՝  
Գարձոն ի մեզ, Մարիամ,

Զաշկունս քոյին գըլթալից,  
Դարձն մեզ գէթ մի անդամ.

Եւ թէ ի սիրան այն փափուկ  
Ու յուզեսցին գութք առ մեզ,

Եւ յանհժամ գոհ եղիցուք,  
Թէ դու կամաւ չակնարկես:

Հայեաց, և աես ով մայրիկ,  
Զի յանցաւոզք եմ ծառայք

Մեղաք որդւոյ քում քաղցրիկ,  
Յաման աչացըն դիստաք:

Այլ քո բարբառ մի միայն

Թէ հաշտ առնել կամիցիս,  
Շատ է, ով մայր, քո մի ձայն.  
Խօսեաց, խնայէ յեզկելիս:  
Եթէ փրկել է քեզ կամ,  
Ով մայր, գըթած մեր մայրիկ,  
Գոգ, ասա նման միանդամ,  
Թէ են սոքա իմ որդիք:  
Այլ մեղանաց մեր խուժան,  
Որդեգրութեանդ, ոչ, թէ զմեզ  
Կայուցանէ անարժան,  
Սակայն գուշ մայր՝ միշտ մայր ես:  
Ո՛չ, թէ սիրով արդ բացցես  
Ըզվերարկուիդ ապաւէն,  
Յաներկեւանն ասպարէս  
Ահա գիմեմք այդր այժմէն:  
Ով սիրեցեալ քաղցըր Մայր  
Լուր արդ ըզբեզ կոչովիս.  
Յզատեա զանձն իմ յամայր,  
Ըլյուսացեալ քեզ հոգիս:

Գովեստ ի Մարիամ

Մարիամ, չետես  
Կուսան գեղանի  
Ոք ոչ քան ըզբեզ  
Անբիծ և բարի:  
Դէմք քո դրախտ և վարդ.

Եւ յետ հաստէին իւր՝  
Այդպէս շնորհազարդ  
Ոչ ցուցաւ այլուր:  
Ոչք քո սիրալիր  
Աստղիկք են պայծառ,  
Բո հայեացք՝ ըզսիրտ  
Առնեն նետահար,  
Մատունք քո և ձեռք  
Բըանալիր բարիաւ  
Են մարգըրտայեռք,  
Գերեն զհոգիս ընաւ:  
Քեզ երկինք պատկառ  
Երկիր և դըժոխ,  
Յարդար ու անարդար  
Հայիս դու անօխ:  
Ո՛չ, Երբ իցէ զքեզ  
Պիտել ինձ յերկին.  
Երբ ողբքս աղեկէզ  
Քեզ հասեալ հատցին:  
Յոսոխին ձեռաց  
Փրկես դու զհոգիս.  
Յապաշնորհս յիս դարձ,  
Ազատեա և զիս:  
Օքնեսցուք երգով  
Ըզմօրս յայս տըւիչ.  
Պատիւ փառք և գով  
Առ նորուն Հաստիչ:  
Մարիամ, մայր մեր,  
Գոչեցէք, Կեցցէ.  
ԶՅիսուս՝ սիրտ ի սէր՝  
Եւ զմայրն երգեսցէ:

Մայր ցաշոց

Ո՛վ գուքը, որ յաջպան զիս ի ցաւ  
Փողեալ՝ ու ի բաց գնայք խընդամիս,  
Հայեցարուք տեսէք անձկաւ,  
Իցէ ուրեք հանգոյն լեալ վիշտ:

Զոր տեսանէքդ այդը առաջի

Խոց վիրալից օրհասական,

Իմ է որդեակ ի խիստ խաչի

Որ անդ տանջի սիրոյն փոխան:

Անս այն որդի է՝ որոյ Հայր

Ճարտարապետ է աշխարհի,

Եւ հաճեցաւ ընտրել զիս մայր՝

Մինչ չեւ հիմունս արկեալ երկրի.

Աստուածն է այն, զոր մանկաձեւ

Տեսի ես նախ ի գիշերին,

Եւ յաստուածեան զիմացն արեւ

Բորբոքեցայ բոլորովին:

Նա զիս կենաց իւրոյ հաղորդ

Ընտրեաց ընկեր հաւատարիմ,

Եւ գերաշնորհ սիրոյն զուդորդ՝

Որով վառեալ և տոչորիմ:

Ըզնանկատմ արդ ի փայտին՝

Վըշտաց ցաւոց ի չոր մահին,

Ընդ որ և ժայռք ի գութ շարժին,

Եւ մեռանի հանուրցն Հաստիւ:

Յով և գարձցի չեք ապաւէն.

Պաշտպան և գիւր չեք նըմա բնաւ.

Կա՝ և ըղբնաւս գիտէ անդէն

Նիւթել վըշտացն իւր վիշտս անբաւ:

Եւ գու Հայր, Տէրդ ամենաղօր,

Զիսրդ ժուժես հայել յերկնից,

Եւ յերաշխէս այն ահաւոր

Կիստել զորդիդ անկարեկից:

Անջլ, աւազի, մեղք մեր ըղբնովաւ

Անկեալ ծածկոյթ՝ գրդուեն ըղկայր՝

Թողուլ զորդին յանհուն ի ցաւ,

Մինչեւ մեռցի նդ մեր սիրաբար:

Որդեակ իմ սէր, և այլ ըղբեզ՝

Որ մեռանիսդ արդ ի խաչին,

Սփոփել գիւրել և Մօրդ ի թեւս

Գոնեա ւ անդել զըունըրդ վերջին:

Եղուկ, զի չեմ քեզ բաւական.

Անջլ և ցաւօքս ըղբքոյն բարդեմ.

Կամիմ, չկարեմ տալ քեզ օձան,

Զմահ ք կըրկին գառըն գործեմ:

Անձինք սիրոյ, սիրել մատիք

Զոր կեանս վըշտաց և մահ ընդ ձեր՝

Յանձնին տարաւ, ու ի ձենջ այժմիկ

Խընդրէ միայն սէր, միայն սէր:



# ՅԱԽԿ

## ԵՐԳՈՑ

---

|                                                                   |    |
|-------------------------------------------------------------------|----|
| Առ Հոգին Սուրբ . . . . .                                          | 7  |
| Հրաւեր Աստուծոյ առ հոգի խուսել<br>ի միայնութիւն . . . . .         | 9  |
| Հոգի մուծեալ ի տուն Աստուծոյ . . . . .                            | 10 |
| Ոերտ հարեալ ի գեղն Աստուծոյ . . . . .                             | 14 |
| Հոգի սիրատենչիկ . . . . .                                         | 15 |
| Քաղցրութիւն կամացն Աստուծոյ . . . . .                             | 16 |
| Հոգի աստուածանուեր . . . . .                                      | 19 |
| Հոգի Հքեալ . . . . .                                              | 20 |
| Տեհն արքայութեան . . . . .                                        | 23 |
| Ոէր Յիսուսի ի խորհուրդ սրբոյ Հա-<br>ղորդութեան . . . . .          | 24 |
| Ի Հաղորդութիւն . . . . .                                          | 26 |
| Առ Յիսուս եղեալ ի բազմոցի . . . . .                               | 27 |
| Յետ Հաղորդութիւն . . . . .                                        | 29 |
| Ջրուցատրութիւն փեսային Յիսուսի<br>ընդ Հարոնացեալ հոգւոյ . . . . . | 32 |

|                                   |    |
|-----------------------------------|----|
| Առ Յիսուս մանկիկ . . . .          | 49 |
| Առ մանկիկն Յիսուս ի Մըսրի . . . . | 54 |
| Ի սէր Յիսուսի . . . .             | 52 |
| Խանդաղատանք առ Յիսուս . . . .     | 54 |
| Ի չարչարանս Յիսուսի . . . .       | 56 |
| Առ Յիսուս վշաակիր . . . .         | 57 |
| Առ Մարիամ յոյս մեր . . . .        | 60 |
| Առ Մարիամ մայր գթութեան . . . .   | 64 |
| Խանդաղատանք առ Մարիամ . . . .     | 65 |
| Առ Մարիամ մայր մեր . . . .        | 65 |
| Գովեստ ի Մարիամ . . . .           | 66 |
| Մայր ցաւոց . . . .                | 68 |





ՍՍ Հայագիտական գրադարան



MAL041731

ՍՍ Հայագիտական գրադարան



MAL041730

ՍՍ Հայագիտական գրադարան



MAL041729

